# Ներդրումային ծրագիր-առաջարկ

## ՀՀ Արմավիրի մարզում տուրիզմի, ձկնորսության զարգացում

(Ներդրումային ծրագրի անվանումը)

### Ամփոփ նկարագիր

*Ամփոփ նկարագրել ներդրումային ծրագիր-առաջարկը, մասնավորապես՝ ներդրման ոլորտը, արտադրվող ապրանքը կամ մատուցվող ծառայությունը, հիմնական սպառման շուկաները, ներդրման տեսակը (նոր ձեռնարկություն, գործող ձեռնարկության ընդլայնում, գործող ձեռնարկության վերապրոֆիլավորում), ներդրման համար նախատեսվող /նախընտրելի/ տարածաշրջանը. մարզը, համայնքը: Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը, այդ թվում մասնավոր ներդրողի, այլ ներդրողների (եթե կան) ներդրումը և ակնկալվող աջակցությունը:*

***Տարածքը, որում ակնկալում ենք ֆինանսական աջակցության, գտնվում է Արմավիրի մարզի Ջրառատ գյուղում: Զբաղեցնում է 10,000մ$^2$ տարածք, որից 5000մ$^2$ բնական ջրավազան է և մյուս 5000մ$^2$ –ը հողատարածք:***

***Տարածքն ունի հիանալի տեսարան դեպի Մասիս սարը:***

***Նախատեսվում է կառուցել 2 հարկանի շինություն՝ առաջին հարկում խոհանոց, պահեստ: Երկրորդ հարկում դիտակետ և անվտանգության համար նախատեսված հանգստի սենյակ: Հարակից տարածքներում, ջրավազանների մոտ նախատեսվում է կառուցել արևապաշտպան ծածկով կառույց՝ ձուկ որսալու համար նախատեսված հարմարություններով՝ թվով 30 հատ:***

***Ծրագրով նախատեսվում է կանաչապատել ամբողջ տարածքը և զարգացնել հանգստի համար նախատեսված բոլոր օղակները: Գործունեության մեխանիզմը կայանում է նրանում, որ աճեցնում ենք ձկնատեսակներ վայրի լճում և հնարավորություն ենք տալիս ձկնորսներին վճարովի մուտք գործել տարածք, որն իր մեջ ներառելու է անվտանգություն, ձկան կարթ, ձուկ բռնելու և ինքնուրույն կամ մեր խոհանոցի միջոցով այն եփելու հնարավորություն: Նախատեսվում է ապահովել հանգստի համար բոլոր հարմարությունները՝ բացառությամբ գիշերակացի:***

### 1. Ներդրման նկարագրություն

*1.1.* *Ներդրման գումարը* - ***70.0 -100.0 մլն ՀՀ դրամ***

- *Պահանջվող ամբողջ գումարը* - ***70.0 -100.0 մլն ՀՀ դրամ***
- *Այլ ներդրողներ*

*1.2.* *Նկարագրել ներդրման տեսակը՝* **նոր ձեռնարկություն /start up/**

- *Անվանումը* -**«Գրիգ Ֆուդ» ՍՊԸ**
- *Գտնվելու նախատեսված վայրը* – **ՀՀ Արմավիրի մարզ, Ջրառատ համայնք**
- 
- *Սեփականատեր (սեփականատերեր)* - **Կոնստանտին Գրիգորյան**
- *Կազմակերպա-իրավական տեսակը* -***սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն***
- *Տեղեկություններ ձեռնարկության տնօրենի վերաբերյալ՝ կոնտակտային տվյալներ* - **Կոնստանտին Գրիգորյան, +37491003222 (viber, whatsapp), +37494444485, էլ.հասցե՝ grigfood@yahoo.com**
- *Աշխատողների նախատեսվող թվաքանակ* -***2-5 աշխատատեղ***
- *Ձեռնարկության նախագծային հզորություն* - ***Լիճն ունի արտադրելու տարեկան 80000կգ ձուկ, իսկ օրական 50 այցելուների համար նախատեսված հնարավորություն:***

*1.3. Ապրանքի կամ ծառայության նկարագրություն*

## 2. Շուկայի ուսումնասիրություն

2.1. *Ապրանքի/ծառայության շուկայի նկարագրություն* – ***Ձկնորսական զբոսաշրջությունը արդեն գործում է Հայաստանում: Իրականում այս զբոսաշրջության տեսակը շատ բացեր ունի, հետևաբար, մենք նախատեսում ենք իրականացնել ավելի քաղաքակիրթ, բարեկարգ եղանակով:***

2.2. *Հիմնական սպառման շուկաների նկարագրություն* – ***Բոլոր ձկնորսություն սիրող անձինք (ընտանիք, ընկերներ, զույգեր, երիտասարդներ)***

2.3. *Հիմնական մրցակիցների նկարագրություն-* ***մրցակիցներն հիմնականում 4-5 են, բայց լուրջ զբաղվում են 2-ը, այն էլ ցածր պայմաններով:***

2.4. *Պահանջարկի դինամիկան հիմնական սպառման շուկաներում* – ***Ձկնորսներն են և նման հանգստի սիրահարները, որոնք տարեցտարի ավելանում են:***

## 3. Ձեռնարկության մարքեթինգային քաղաքականությունը

*3.1. Գովազդային և առաջմղման քաղաքականություն* – ***Վեբ կայք, ֆեյսբուք, ինստագրամ, ռադիո, զբոսաշրջային գործակալություններ: Նաև նախատեսվում է տարին 1-2 անգամ կազմակերպել մրցույթներ, ցուցահանդեսներ:***

*3.2. Տարածման ուղիները* -***Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն ինտերնետի և զբոսաշրջային գործակալությունների միջոցով:***

*3.3. Գնային քաղաքականություն* -***նշված 4-5 վայրերում գինը տատանվում է 1500-3000դրամ մուտքի վճար և ամեն որսացած ձկան տեսակի շուկայական գին:***

## 4. Վաճառքի կանխատեսում

*4.1. Վաճառքի ծավալներն արտահայտված ֆիզիկական և դրամական միավորներով, 5 տարվա կտրվածքո* - ***Ակնկալում ենք վաճառել հինգ տարում 200,000 կգ ձուկ, մոտավոր 400,000,000 ՀՀ դրամ արժեքով: Այցելուների թիվը հինգ տարիներին 16,000 մարդ՝ 48,000,000 ՀՀ դրամ ընդհանուր մուտքավճարով:***

## 5. Ֆինանսական հաշվարկներ

*5.1. Ինքնարժեքի հաշվարկ* -***ձկնատեսակների միջինացված ինքնարժեքը՝ 1 կգ-ի համար 1400 դրամ:***

*5.2. Ակնկալվող շահույթի կամ շրջանառության հաշվարկ 5 տարվա կտրվածքով* - ***140,000,000 ՀՀ դրամ շահույթ***

*5.3. Ներդրումների հետգնման ժամկետ* -***3 տարի***

## 6. Ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը

- *Ձեռնարկության կամ ծառայության մատուցման ազդեցությունը մարզի կամ համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակի վրա,*
  ***Ծրագրի կատարմամբ հնարավորություն կստեղծվի զարգացնել զբոսաշրջությունը Արմավիրի մարզում, դրական ազդեցություն թողնել համայնքի բյուջեի վրա, ստեղծել նոր աշխատատեղեր:***
- *Նոր ստեղծված աշխատատեղերի քանակը* -***ընկերության վերագործարկմամբ նախատեսվում է 10-30 նոր աշխատատեղերի ստեղծում***

**7. Պետությունից  կամ այլ ներդրողից ակնկալվող օժանդակություն և պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն**

- *Ներդրումների ներգրավում՝ փոկոսային հարաբերակցությամբ*
  - *Ակնկալում ենք դեսպանատների, տուրիզմի զարգացմանը միտված ՊՈԱԿ-ների աջակցությունը ոլորտի զարգացման, տուրիստների տեղեկատվության մատուցման հարցում:*
- *Խորհրդատվության և/կամ տեղեկատվական աջակցություն,*
- *Հարկային արտոնություններ,*
- *Բաժնեմասային ներդրում ներառյալ վենչուրային ներդրում,*
- *Դրամաշնորհային ծրագրեր:*







